ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2012 թվականի N 447-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՌԼԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի, վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 56[1] հոդվածի, <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի պահանջների և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի / մարզային հողային պետական տեսչության / 2012 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 03 ակտը՝ **որոշում եմ.**

1. Համայնքային սեփականության հողամասերի օտարման կարգը խախտելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձորի գյուղական համայնքի ղեկավար ***Կառլեն Հովհաննիսյանին*** նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչության/ պետ Լևոն Պետրոսյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ